

Աղաղակն է՝ որ կարծես իրենց ճիգէն կը լըսուի:
 Դեմքերնուն վրայ՝ թափուած են խառնափղնթոր մազերնին՝
 Որոնց ծայրէն կը թորի առատ քըրտինք մ'հողին վրայ:
 Շունչերնին դուրս կը պոռթկայ ընդհատ ընդհատ ռունգերնէն՝
 Եւ միացած կուռ սայլին երկրասասան դըղըրդիւնին
 Վայրենի նուազ կ'ըլլայ աշխատանքին այդ դաժան:
 Ահաւասիկ կը կաթի խարազանուած ուսերնէն
 Արիւնն արդար, սուրբ գինին մարտիրոսուած այդ Ուժին,
 Որով՝ խըխում՝ կ'արբենայ ամուլ լերան ճերմակ հողն
 Ուրտեղ նոյնիսկ չի գըտներ գաղտնամես օձը սընունդ,
 Ո՛չ ալ կեանքն իր բաշխելու համար արեւն հունտ մը եզ:
 Այդ կատաղի վերելքէն՝ անոնց ոտքին տակ լայնշի
 Յանկարծակի կը փըրթին լայնափեռեկ ճեղքուածքով
 Ժայռէն մեծղի կըտորներ. եւ ձորին մէջ թաւալող
 Պայծառահունչ կրանիդի իւրաքանչիւր կոշտ հատուած
 Նեբաններուն վիրաւոր վարդագոյն դրո՛շմը ունի:
 Զուլայ՝, վե՛ր վե՛ր: Այդ մահուամբ յըղի հրանօթն ուռնակուռ
 Միջօրեի անողորմ ամառնաբորբ տօթին տակ
 Ճաթելու չափ տաքցած է, շիկնալու չափ՝ հրագօծ.
 Երբ կ'ընկըղմի մերթ արեւն երախին մէջ լայնաբաց՝
 Ան վիշապի մ'աչքին պէս կը ժայթթէ թուխ փայլակներ:
 Մինչ խարազանն անընդհատ եղեռնաբար կը շաչէ՝
 Թիապարտները կարծես, գլուխնին հակած անմըռունչ
 Թանձըր ու կախ յօնքերնուն տակ մըտասոյգ, ինքնամփոփ,
 Դեռ կը խորհին լեռներու իրենց ազատ կեանքին վրայ,
 Ո՛հ, այն լայն կեանքն՝ ուրկէ շեշտ կայծակներու պէս անցան
 Մահ եւ փլատակ դրոշմելով ամէն հինգած շէնքի վրայ.
 Այն պայծառ կեանքն՝ որ իրենց կամքին թռչքովը միայն
 Գաղափարին աստղալից խորաններուն կը սուրար:
 Ո՛չ մէկ մտածում պահպանող, ո՛չ մէկ հեշտանք, ո՛չ մէկ կոյս
 Կըրցաւ վայրկեան մ'օղին մէջ բըռունցքն իրենց կեցընել,